ԱՐՄԵՆ ԶԱՏԻԿՅԱՆ

ՀԱՐԿԱՎՈ՞Ր Է ԱՐԴՅՈՔ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱ՞ՆԸ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայրենիքի ազատության համար պայքարում է նա, ով զգում է այդ կորուստը: Նա, ով զուրկ է այդ զգացումից, կորած է, ինքը՝ Հայրենիքի, Հայրենիքն՝ իր համար...

Ոչ միայն մեզ, այլեւ ամբողջ մարդկությանն է հայտնի, որ ոչ մի ազգ կամ պետություն չի հալածվել ու բզկտվել այնպես, ինչպես Հայաստանն ու հայությունը: Իհարկե, եղել են ու կան ազգեր, որոնք նույնպես հալածվում են, ենթարկվում խտրականության, տեղահան արվում իրենց հայրենիքից, ցեղասպանության զոհ դառնում, մինչեւ իսկ բնաջնջվում, իսպառ վերանում երկրագնդի երեսից: Սակայն դժվար է մատնանշել մի ազգ, որն ունենալով հզոր պետություն, դարեր շարունակ հալածվելուց հետո, այսօր իրեն բաժին հասած այդ պետության մեկ տասներորդ մասի

Տէ՛ս էջ 3

ներում, ինչպես նաև հենց փողոցներում դրված վաճառասեղանների դիմաց կանգնած տեղացիները զբոսաշրջիկներին առաջարկում են Մանդյան տոների հուշանվերներ, որոնք պատրաստում են տեղական վարպետները։ Այդ հուշանվերներից են, օրինակ, ձիթապտղի կորիզներից հավաքած տերողորմեաները, սադափազարդ փոքրիկ խաչերը, սրբապատկերներ... Մանդյան տոներին առանձնապես մեծ պահանջարկ են ունենում Մարիամի, Հովսեփի և նրանց ընտանի կենդանիների՝ այծի, ոչխարների և իշուկի կավե քանդակները, որոնք խնամքով դասավորված են քարանձավի ստվարաթղթե մանրակերտի մեջ։ Անշուշտ, ա՛յն քարանձավի, որտեղ, ավանդության համաձայն, ծնվել է Հիսուսը։

Բեթղեհեմը ոմանց հրապուրում է հավատով, մյուսներին՝ տարաշխարհիկ հրապույրով, երրորդները գալիս են իրենց հետաքրքրասիրությունը գոհացնելու։ Համենայն դեպս, մինչև վերջերս ամեն տարի դեկտեմբերի 24-ի 25-ի գիշերը Բեթ-Լահմը լցվում էր բազմալեզու ժխորով և քրիստոնեական երգասացությամբ, փողոցներով անցնում էին եկեղեցականների ու հավատացյալների տոնական թափորները։ Տոնակատարության կիզակետը, ավանդության համաձայն, Քրիստոսի Մանդյան եկեղեցին է, որը կառուցված է 326 թվականին՝ հռոմեացի միապետ Կոստանդինի հրամանով, նա քրիստոնեություն էր ընդունել մահից առաջ։ Իսկ հետո, արդեն բյուզանդական միապետ Հուստինիանոսի օրոք այդ եկեղեցին վերակառուցվել ու ընդարձակվել է։ Եկեղեցու այցելուները այսօր էլ կարող են տեսնել Քրիստոսի ծննդյան տեղը՝ Սուրբ քարանձավը, կարող են նույնիսկ պտտվել շուրջը, քանի որ դեռևս Կոստանդինի օրոք այդ սրբավայրը կտրել-անջատել են հիմնական քարաժայռից։ Ավելի ուշ՝ քարանձավի բնական կամարները պատել են ճերմակ մարմարիոնով, այնպես որ Մանդյան տոների հուշանվերային ստվարաթղթե մանրակերտները ոչ ոք այլևս չի կարող համեմատել իրականի ճշգրտության հետ։

Դարեր շարունակ ուղղափառների, կաթոլիկների և քրիստոնեական ուրիշ եկեղեցիների միջև պայքար կար այդ եկեղեցու նկատմամբ մենաշնորհ ունենալու համար։ Ի վերջո, տարբեր դավանաբանությունների ներկայացուցիչները բառիս իմաստով խաղաղությամբ իրարից հեռացան դեպի տաբբեր անկյուններ։ Հունադավան եկեղեցին ճանաչված է Սուրբ քարանձավի գլխավոր «կառավարիչ»։ Սուրբ քարանձավի հատակին արծաթով փայլում է «Բեթղեհեմի աստղը», որի մեջ լատինատառ արձանագրություն կա. «Այստեղ կույս Մարիամը ծնեց Հիսուս Քրիստոսին»։

Զխորանանք աստվածաբանների ու անաստվածների իմաստասիրական թավուտների մեջ, որովհետև կա թեորն այն է, որ մարդկության պատմական հիշողության մեջ Բեթղեհեմը եղել և մնում է գթության և բարձրը բարոյականության հայրենիքը։

Հովսեփն էլ Գալիլեայից՝
Նազարեթ քաղաքից, գնաց
Հրեաստան՝ Դավիթի քա-
ղաք, որ Բեթղեհեմ է կոչ-
վում... որ զրվի իր նշանած
Մարիամի հետ, որ հղի էր։
Եվ եղավ, որ երբ նրանք
այնտեղ էին, Մարիամի ծնե-
լու օրերը լրացան։ Եվ իր
անդրանիկ որդին ծնեց, և
պատեց խանձարուրներով և
մսուրի մեջ դրեց... Եվ այն-
տեղ հովիվներ կային... Եվ
Տիրոջ Հրեշտակը կանգնեց
նրանց դիմաց... Եվ ասաց
նրանց.— Այսօր ձեզ Փրկիչ
ծնվեց Դավիթի քաղաքում,
որ է Քրիստոս Տերը...

ՂՈՒԿԱՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՑ

վրա նույնպես շարունակի բռնաբարվել, կոտորվել, բայց եւ չկորցնելով երբեք ազատատենչ իր ոգին, հավատքը եւ հաղթանակի հույսը։ Միևնույն ժամանակ դժվար է մատնանշել նաեւ մի ազգ, որը ճակատագրի բերումով սփռված լինելով աշխարհով մեկ, ունենա այսքան տարաձայնություններ ու հակասություններ իր ժողովրդի երկու հատվածների միջեւ։

Եթե չվախենանք ճշմարտությունից եւ ինքնաքննադատությունից, ապա պետք է խոստովանենք, որ մենք՝ հայերս, բացառություն ենք կազմում նաեւ այս հարցում։ Երեք տարի է, ինչ գերված Հայաստանում սկսվել է հայոց համազգային ապստամբություն։ Զտանելով այլեւս 70 տարի շարունակ բոլշեւիկյան բռնապետության հակազգային եւ հակամարդկային ծանր լուծը, դանակը ոսկորին հասնելուց հետո, ազգն ապստամբեց, բողոքի ցույցեր բարձրացնելով կյանքի անմարդկային պայմանների դեմ (մթնոլորտի, լեզվի ապականման, սոցիալական պայմանների եւ այլն)։ Մոսկովյան իշխանությունները եւ իր ռազմա-ոստիկանական ապարատը՝ ԿԳԲ-ն, գերազանց գիտենալով կայսրության ստրկացված ազգերից յուրաքանչյուրի հոգեբանությունը, թույլ կողմերն ու ազգային «հիվանդությունները», նման դեպքերում «շտապ օգնության» են հասնում, Կրեմլից դեպքի վայր հասցնելով «անհրաժեշտ դեղատոմսը»։

Հայության պարագային, այդ դեղատոմսը միշտ եղել է հողային պահանջատիրությունը Թուրքիայից, իսկ մերօրյա՝ ժամանակակից տարբերակով արդեն, համաթուրանական վտանգը, պանիսլամիզմի աշխարհակալ նպատակները եւ այլն։

1988 թ. փետրվարյան ապստամբության առաջին իսկ օրերին, մոսկովյան ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ քաջ գիտենալով, թե դա ուր է հասնելու, անմիջապես այն շրջեցին իրենց ուզած հունով, վերածելով համազգային ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ համազգային ՇԱՐԺՄԱՆ։ Ապստամբությունը սկսում եւ տանում է ժողովուրդը՝ իր ընտրյալներով, իսկ մածուցիկ շարժումները սպրքվում են վերեւից եւ կառավարվում «լիազորված հայրենասերների» միջոցով, որոնց իշխանությունները գործելու համապատասխան միջոցներ են տրամադրում (հավաքավայրեր, մասնուլ, ամբիոն եւ այլն)։ Կրեմլի մասնագետ վարիչների ամենահզոր զենքերից մեկն այն է, որ նման շարժումներ ստեղծելիս շարժման հերոսները եւ մնացած դերակատարները որպես կանոն չեն հասկանում, որ իրենք դառնում են գործիք կայսրության ձեռքում։ Բոլորովին պարտադիր չէ, որ նրանք հավաքագրված լինեն ԿԳԲ-ի կամ իշխանությունների կողմից, հաճախ շարժումների ջրերն ընկնում են անփորձ հայրենասերներ եւ մինչեւ իսկ ժողովրդի լայն զանգվածներ։ Այս առումով արցախյան շարժումը մի դասական օրինակ էր բոլշեւիկյան բռնապետության ամբողջ 70-ամյա պատմության մեջ։ Մոսկվային հաջողվեց մի ամբողջ ազգի շեղել իր պայքարի նպատակներից, հանել նրանց «պատերազմի» մի այլ գերված ազգի դեմ եւ ցույց տալ աշխարհին, որ կայսրության ներսում չկա ազգային-ազատագրական պայքար, այլ կան ներազգայնական ծայրահեղական եւ կրոնական բախումներ։ Սակայն հրեշագործ բոլշեւիկները չէին կռահել, որ իրենց «թույլտվությամբ» ոտքի ելած Ղարաբաղն ու Հայաստանը կարող են գայթակղիչ օրինակ ծառայել կայսրության մյուս ազգերի համար, եւ որ դրանով կարող է սկսվել մոսկովյան բռնապետության անկումը։ Հոգեպես արդեն իրար միացած արցախահայից ու հայից, Խորհրդային կայսրության փլուզման հիմքը դրած հայ ժողովրդից, արյունարբու բոլշեւիկն իր ոխը կարող էր հանել միայն մեկ ձեւով. կործանել այդ ժողովրդի բույնը՝ մարդկությանը դեռեւս անհայտ հրեշագործությամբ։

Երկրաշարժ...

Հասկացավ Հայկի ցեղն իր դարավոր բնազդով, որ այս ՇԱՐԺԸ նույնպես ՇԱՐԺՈՒՄ ԷՐ, որ ինքը հպվիտենական շարժման է դատապարտված, քանի դեռ չունի իր սեփական Երկիրն ու պետականությունը։

Իսկ հասկացա՞վ արդյոք այս բանը հայության մյուս հատվածը՝ սփյուռքահայությունը։ Ես հազար անգամ ներողություն եմ խնդրում Սփյուռքի իմ հայրենակիցներից, որոնց մեջ ապրել եմ տասը երկար ու ձիգ տարիներ, որոնց մեջ հանդիպել եմ մարդկանց, ովքեր իրոք ապրում են Հայաստանով, քաջ գիտակցելով, որ այն գերված է, եւ յուրաքանչյուր հայրենասեր ու ազնիվ հայի պարտքն է միանալ հայրենի ժողովրդի ազատության պայքարին։ Սակայն այդպիսիք այնքան քիչ են եղել, ոչով, որ ես չեմ կարող ինձ իրավունք վերապահել ասելու, որ այո, Սփյուռքն ապրում է Հայաստանի հոգսերով եւ նրա հետ է։ Հայրենիք չունեցող եւ օտարության մեջ ապրող հայն ընկղմվելով մեծ աշխարհի մարդկային հորձանուտի մեջ, թեեւ ի ծնե խորթ զավակն է այդ աշխարհի, ժամանակի ընթացքում ձերբազատվում է այդ խորթությունից, ընտելանում կյանքին, նրա առօրեա հոգսերին ու հաճույքներին։ Պարզ ու սովորական մարդուց, շարքային սփյուռքահայից չի կարելի պահանջել ազգային այնպիսի գիտակցություն որով նա կարողանա ամբողջովին ըմբռնել հայրենի ժողովրդի վիճակը եւ պայքարի քնույթը։ Առավել եւս, երբ նրան մոլորեցնում ու շեղում է սոցիալիզմի օրրանը հանդիսացող Մոսկվան՝ հայկական Սփյուռք առաքած իր սոցիալիստ գործակալների եւ իր սնուցած սոցիալիստական կուսակցությունների միջոցով։ Բավական էր, որպեսզի Սփյուռք գործուղված բալայաններն ու աղանբեկյաններն իրենց կյանքով երդվեին, թե բարիկենդան Գորբաչեւը խոստացել է Ղարաբաղը տալ Հայաստանին, եւ ամբողջ հայկական Սփյուռքը՝ Բեյրութից, Պարսկաստանից մինչեւ Ֆրանսիա, Ամերիկա ու Արգենտինա, մինչ այսօր Թուրքիայից Ղարաբաղ են պահանջում։ Ղարաբաղցին եւ հայաստանցին վաղուց հասկացել են սադրիչ Մոսկվային, եւ հայության փոքրությունը տեսնում են միասին կայսրության փլուզարից դուրս գալու մեջ, սակայն Սփյուռքի սոցիալիստ ԸՆԿԵՐՆԵՐԸ շարունակում են ակումբներից երգելով Ստամբուլն արյան ծով դարձնել, դժբախտաբար իրենց ազդեցության ոլորտը գցելով անտեղյակ մասսաներին, ցավալիորեն նաեւ երիտասարդությանը։

Երբ այդ մասին լսում է անկախության համար պայքարող Հայրենիքի այսօրվա սերունդը, ակամայից հարցնում է, մի՞թե Սփյուռքի կուսակցապետերը չեն հասկանում, որ Արեւմտյան Հայաստանի հողերը Թուրքիայից վերցնելու համար առաջին հերթին հարկավոր է ունենալ խարիսխ՝ անկախ պետականություն։ Իսկ հայկական այս կամ այն կազմակերպությունն բանակցել անգամ չի կարող Թուրքիայի այսօրվա կառավարության հետ։ Միայն պետությունները կարող են ներկայացնել տվյալ ժողովրդի շահերը, իսկ հայության «շահերն արտահայտող» Խորհրդային Միությունը բազմիցս հայտարարել է, որ ինքը Թուրքիայից ոչ մի պարտք ու պահանջ չունի։

Ես՝ Ազգային Ինքնորոշում Միավորման ամերիկյան մասնաճյուղի անդամ եմ, որը հիմնադրվել է Հայրենիքում դեռեւս 1987 թվականին, իսկ արտասահմանյան մասնաճյուղը սկզբում հայտնի էր Հայաստանի Ինքնորոշման Զորակցություն անվամբ։ Ազգային Ինքնորոշում Միավորման նպատակն է ազգին բերել ինքնորոշման գաղափարին եւ քաղաքական ճանապարհներով անկախացնել Հայաստանը։ Մենք արտասահմանում հանդես ենք եկել որպես պայքարող Հայաստանի ներկայացուցիչներ, լայն ճանաչման ենք արժանացել արեւմտյան քաղաքական եւ պետական շրջանակներում, սակայն միշտ հալածվել ենք հայկական Սփյուռքում։ Միայն վերջերս, երբ հայրենի ժողովուրդն դառը փորձությունների ենթարկվելով հասավ ինքնորոշման եւ անկախության գաղափարին, Սփյուռքի որոշ շրջանակներ սկսեցին հաշվի նստել ԱԻՄ-ի հետ։ Այդ բանը հատկապես ընդգծվեց ԱԻՄ-ի հիմնադիր նախագահ, Հայաստանի անկախության պայքարի ջահակիր Պարույր Հայրիկյանի Հայրենիք կատարած հաղթական վերադարձից հետո։ Սփյուռքի քաղաքական շրջանակներից առաջինը Ռամկավար Ազատական Կուսակցությունն էր, որ կոտրեց սառույցը։ Լինելով էությամբ ժողովրդավարական, ՌԱԿ-ը կարողացավ քաղաքական ճկունություն ցուցաբերել եւ դուրս գալ համասփյուռքյան ճգնաժամից։ Մինչդեռ մյուս երկու սոցիալիստական կուսակցությունները՝ հնչակներն ու դաշնակները, տասնամյակներ շարունակ դաշինքի մեջ լինելով Հայաստանի դրածո համայնավար կառավարության հետ, անվանելով այն «հայրենի կառավարություն», ի վիճակի չեն իրենց սնուցող պիրտալարը կտրել միջազգային սոցիալիզմի բնօրրան Կրեմլից։ Նրանց համագործակցական արմատներն, ըստ երեւույթին, այնքան են խորացել, որ բացահայտորեն չեն կարողանում հանդուրժել շատ թե քիչ ժողովրդավար ձեւով ընտրված